

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

14.01.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Հ.Հակոբյանը Ա.Աղլոյանը, Ս.Ղուբաթյանը, Ս.Ասրյանը, Հ. Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյան -մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ. Խանզադյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Զեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա) Քաղաքացիների հետ շփումների ժամանակ դրսևորել պատշաճ վերաբերմունք, բացառել դժգոհությունների առաջացման ցանկացած առիթ և հնարավորինս պարզաբանել ու աջակցել խնդիրների լուծման հարցում:

բ) Անհրաժեշտ ուշադրություն դարձնել աշխատակիցների կողմից կարգապահական կանոնների պահպանմանը:

գ) Ամեն շաբաթ ներկայացնել ստորաբաժանման աշխատակիցների աշխատանքների ամփոփ հաշվետվություն:

դ) Աշխատանքի ժամերին բացառել աշխատակիցների կողմից ֆեյսբուկով և այլ սոց. ցանցերով շփումները:

ե) Նախատեսվող Բիզնես-ֆորումի հետ կապված առաջարկությունները քննարկման նպատակով ներկայացնել համապատասխան ստորաբաժանում:

զ) 10-օրյա ժամկետում ապահովել գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքով զբաղվող աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվության ներկայացնելը անձնակազմի կառավարման բաժին :

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին և աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Եղիազարյանին՝

5-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն մարզի հանրակրթական դպրոցներում ներառական կրթություն ստացող աշակերտների վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների ղեկավարների կողմից մարզի համայնքներում 500 000-ից ավել պարտավորություններ ունեցող անձանց նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ և 10-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Համայնքներից ստացված տեղեկատվության հիման վրա ներկայացնել հաշվետվությունների գրաֆիկը:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Լ.Բերոյանին՝

5-օրյա ժամկետում ներկայացնել 2018թ. կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին՝

Մարզի գազալցակայաններում կատարվող շրջայցերի վերաբերյալ 10-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

 Invalid signature



ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ